

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

7

ԲՈՅԵՐԻ ԱՐԴՅՈՒՆ

7

Պ. ԳԱՅՐԵԼՅԱՆ

ԽԱԳԱՐԱԾՈՒԿԸ

ԲԶԵՋՆԵՐԻ

ՅԵՏԵՎԻՑ

1927

ՊԵՏԱԿԱՆ-ՅԵՐԵՎԱՆ





ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 7 Բնագիտական սերիա № 7

Ո. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՃԱԳԱՐԱՄՈՒԿԸ
Բ Զ Ե Զ Ն Ե Ր Ւ
Յ Ե Տ Ե Վ Ւ Ց

(Կենդանաբանական զբույժներ)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926

Գրառեպիվար № 26-ը

հ. 491

Տիրաժ 3000

Պետհրատի յերկրորդ տպարան Յելեվանում—161

ՃԱԳԱՐԱՄՈՒԿ

Տեսել եք ճագարամուկ։ Գուցե տեսած լինեք նրա պատկերը։ Բայց յես կենդանի, իսկական ճագարամուկ եմ ասում։ Տեսնել այդ ռետինի նման ձկուն, աշխուժ կենդանուն, շոլել նրա գեղեցիկ գլուխը, նայել նրա վառվը-ռուն՝ քիչ դուրս ընկած աչքերին, բռնել ու շոշափել նըրան ձեռքումը և վերջապես տեսնել կենդանուն ցատկութելիս— դրանից ել մեծ հաճութք և բավականություն։

Մի որ ինձ ու փոքրիկ ոգնականներիս հաջողվեց այդ բախտին արժանանալ. մենք վոչ միայն տեսանք կենդանի ճագամարուկ, այլ և բռնեցինք, շոշափեցինք և յերկար ժամանակ ել մեր դիտողության առարկան եր նա։

Ահա թե ինչպես յեղավ։

Բազվի շրջակա դաշտերումն ելինք. բաղաքից դուրս, այսպես կոչված՝ Արմենիքենդի (Հայկավանի) մոտերքում։ Չոր, համարյա անխոտ, բաց ավաղածածկ տափարակ տեղ եր։ Տեղ-տեղ պատահում ելին բարձրություններ, արհեստական փոսեր մի տեղ տներ կառուցելու համար բար ելին կտրում, մի ուրիշ տեղ ել կավ վերցնում։ Մեզ ավելի շատ դրավում ելին խորշեր ունեցող փոքրիկ բլրակներ։ Հեռվից այդպիսի մի բլրակ ընկավ մեր աչքին։ Արագացրինք մեր բայլերը։ Մոտեցանք։

— Անպատճառ այս բլրակի տակ ճագարամուկ կլինի, — ասաց ուղեկիցներիցս մեկը։

Նրա յենթադրությունը ճշտվեց։ Բլրակը յերկու կողմերից ուներ խորշեր։ Փայտն անցկացրի ներս. նա բավականաչափ խորը ներս գնաց. յեթե շարունակեցի նույն դործը՝ ել ավելի խորը կերթար, բայց կարծես թե պա-

տին զեմ առավ. յերեկի անցքն ուղղաձիղ չեր. փայտը ծըռել ու ել ավելի ներս տանել անկարելի յեր. Փորձեցինք մյուս մուտքը — նույնն եր. Հասկացանք, վոր բլրակի տակ ճագարամկան բունն եր. նա իր բնի կենտրոնից, իհարկե իր ապահովության համար՝ տարբեր ուղղությամբ մի քանի անցքեր եր փորել. թշնամին հետապնդելու ժամանակ հազիվ թե նրան բոնի, ճագարամուկը հեշտությամբ ծըլկվում ու փախչում ե վտանգից:

Սկսեցինք փորել բունը. ձեռքերով, փայտերով փորում ու լախացնում եյինք խորշը. Ակզբում մի քիչ կասկածում եյինք, մի գուցե ճագարամկան բուն չե, բայց յերբ չոր ավազից ու կավից հետո սկսեցինք դուրս հանել խոնավ, փխրուն հողը ասացի.

— Այդ լավ նշան ե, անպայման այս բլրակի տակ կենդանի կա. չհուսահատվենք, շարունակենք աշխատանքը:

Ելի փորեցինք. հանեցինք խոտի մնացորդներ. Այլիս չեյինք կասկածում, մենք կանգնած եյինք մեր վորոնած կենդանու բնի առաջ. Բավական քանակությամբ կավ դուրս թափեցինք, սա լավ նշան եր, վորովհետեւ ճագարամուկն ավազային փխրուն հողի մեջ բնակվել չի սիրում. փխրուն ավազը յերբեմն կարող ե նրա բնի անցքերը ծածկել.

Յերեք հոգի եյինք, բոլորս ել աշխատանքի լծված. Փորում հա փորում եյինք. ինչքան խորն եր իսկական բունը. Աշխատանքի ժամանակ չնկատեցինք, ինչպես մեր շուրջը հավաքվել եյին սի քանի մալականի տղաներ՝ յերեք տարեկանից մինչև տասը. Մեզանից չորս քայլ հեռավորության վրա կանդ եյին առել և զարմանքով լի պիտում եյին մեզ. Հավանական ե նրանց զարմացնում եր մեր անսովոր տեսքը և մեր աշխատանքը. Իսկապես, ով վոր ել մեզ տեսներ կզարմանար ու կմտածեր. «Ես ինչ մարդ ե՝ սկ, լախեզը զլխարկով, վոր փոքրիկ փայլուն թիակը ձեռքին փորում հա փորում ե. ես ինչ քաղաքացի տղա-

Ներ են՝ մեկի վզով դցած ինչ վոր կանաչ բարակ դույլի պես բան (դա բոտանիկիրկան ե, խողովակածեւ մետաղուանոթ բույսեր հավաքելու համար), մլուսի կողքին կախած մի տոպրակ, լի լուցկու և գլանակի արկղիկներով:

Ուշադրությամբ նայում եյին մեկ մեզ վրա, մեկ բլրակին: Գլուխս դարձրի նրանց ու, աշխատանքս չընդհատելով՝ ասացի:

— Բարե ձեզ:

Վողջույնս նրանց համար անսպասելի էեր. իրար նայեցին, բայց իսկույն չպատասխանեցին, մի քիչ սկսեցին յետ-յետ գնալ, քթի տակ ինչ վոր բան մըմրթացին. լուռ ելինք: Յես քաջալերեցի նրանց.

— Նու, ինչու չեք վողջունում, բարե ձեզ—կրկնեցի:

— Բա...ըս-հաղիվ լավից մեկի, ավելի համարձակի ձախը. հանգիստ և բարյացակամ վողջույնս նրանց սիրտ տվավ: Նրանցից մեկը հարցըեց:

— Դաշտամուկլ եք վորոնում:

— Այո, բայց ճագարամուկ և վոչ դաշտամուկ, գիտե՞ս, են վոր յերկար վոտքեր ունի:

— Ա...գիտեմ, մենք դաշտամուկ ենք ասեւմ... այդ ճագարամուկը տանելու յես ծախելու:

— Վոչ, ինչու, հենց այնպես ուզում ենք բռնել:

— Իսկ մենք յերբ բռնում ենք, տանում ենք դեղատուն և ծախում:

Հետո ստուգեցի, վոր իսկապես դեղատներում գնում են, բայց թե ինչու համար—չիմացա. ով գիտե, թե դրանից ինչպիսի դեղեր են պատրաստում:

Տղաների հետ արդեն մոտ ծանոթացանք: Նրանք այլևս մեզ վրա խեթ աչքով չեյին նայում, մեզ միացան. վորը փայտով, վորը պապական ժանգոտած, կոտրած դանակով, վորը քարով ու հենց այնպես՝ ճարպիկ շարժուն ձեռքերով, —ընդհանուր ուժերով և մեծ յեռանդով կպած

Ելինք աշխատանքի, Քանի գնում մոտենում ելինք բնին։ Սկսեցինք դուրս բերել արևածաղկի սերմերի կճեպներ, ցորեն և այլ սերմեր, դուրս բերինք նաև ավելի մեծ քանակությամբ խոտ, թղթի, շորի կտորտանքներ և այլն։ Ել վոչ մի կասկած չկար, վոր շուտով կհասնենք կենդանուն։

Անցքը քանի գնում խորանում եր։ Այս բլուակի վրա ճագարամուկը դեպ իր հանգստյան տեղը չերեք անցք եր բացել։ Մենք ել յերեք մասի բաժանված՝ հսկում ելինք մուտքեռը։ Կերակուրի մնացորդների հետ մի քանի ծխած գլանակներ ել գտանք, դուրս բերինք։

— Ոհո, հո—կանչեցին տղաները—ուրեմն ճագարամուկը ծխում ել ե……

Իսկապես ի՞նչ գործ ունեյին գլանակները մկան բընում, ինչի՞ն ե պետք։ Յերկու ուղեկիցներս սպասում ելինք բացատրության։

Ասացի։

— Ճագարամկան սովորությունն ե այդ. դրսում ինչ ձեռքն ընկնի, յեթե իհարկե իրեն դուր գա, զրավի, իսկույն ներս պիտի տանի. Ել խոտ ասես, թղթի, շորի կրտորտանքներ ասես, բոլորը ներս ե բաշում, իրար վրա դարսում և փափուկ անկողին ե պատրաստում—պատահած գլանակն ել՝ չե վոր թուղթ եր, այդ ել կարելի չեր ոգտագործել։

Բավական քանդել ելինք, արդեն մոտեցել ելինք բնին։ Հանկարծ խորշերից մեկի պահապան տղաներն աղաղակելով, ցատկուելով վախեցած յետ թռան… ճագարամուկը դուրս եր չեկել… յերբ տղաները սթափվեցին, արդեն ուշ եր. մուկը դուրս ծլկվելով՝ դիմել եր փախուստի։ Տղաները վազեցին նրա յետեից. Բոլորս ել սկսեցինք հետապնդել։ Անկասկած դա ճագարամուկն եր. յես մոտիկից տեսա նրան, բայց այնքան շուտ ծլկվեց, վոր լավ

Հկարողացա դիտել. իհարկե ավազագույն մուշտակ ունենալով նա նկատելի չեր անփորձ աչքերին. ըետինե ձկուն գնդակի պես ցատկութելով՝ փախչում եր և ինչպէս փախչում... ձին չեր հասնի նրան, ուր մնաց մենք. Շագարամկան գույնն այնքան նման եր ավազի գույնին և այնպես եր նա ձուլվում շրջապատի հետ, վոր հաճախ աչքից կորցնում ելի նրան. Նրա փորն ու կուրծքն եր միայն սպիտակ, բայց այդ վոչինչ, ավելի մեծ պաշտպանողական նշանակություն ունի նրա մեջքի, կողքերի գույնը. Տեսնելիք ինչ թռիչքներ եր անում, ինչպէս եր վոստոսում և քանի գնում ավելի հեռանում ու հեռանում եր:

Բայց մենք շատ հոգի եյինք: Նահանջի բոլոր ուղիները բռնեցինք: Հոգնեցրինք նրան, տղաներից մեկն անգուշաբար քար նետեց, հավանական ե վոտքը քիչ վիրավորվեց, վորովհետև նա հանկարծ կաղեց, վայր ընկավ, բայց շուտով վոտքի յելնելով ելի վազեց, այս անգամ ավելի թույլ:

Բռնեցինք:



Ճագարամուկ

Նկար № 1

Նա ծվվաց: Ինչպէս եր թփրտում նրա մեղմիկ սիրտը, ինչպիսի կատաղությամբ ելին վառված նրա խոշոր

ու փայլուն աչքերը։ Տղաներից մեկը փորձեց դնչից բըռնել, բայց զզջաց։ բարձր ճշալով՝ մատները յետ բաշեց։ Ճագարամուկը ցույց տվեց իր ատամների ույժը։

— Տղերք, — ասացի — զզույշ յեղեք նրա ատամներից։ Հեք հավատում, ապա նայեք։

Զգուշությամբ բաց արի կենդանու բերանը. տեսանք նրա առջևի յերկար ատամները՝ յերկուսը վերևում, յերկուսը ներքեւի ծնոտի վրա, սրանք սրածայր կտրիչներ ելին։ Բոլոր կրծող կենդանիների հատկանիշն ե այդ՝ ունենալ չորս ուժեղ կտրիչներ։ Նույնը կտեսնենք նրա ազգականների բերանում, սովորական մկան, նապաստակի, ճագարի, առնետի. բոլորն ել կտրիչներ ունեն, սնունդը կրծելով են ուտում, դրա համար ել կրծողներ են կոչվում։

— Յեթե շարունակ այդ կտրիչներով կրծեն, հո վերջի վերջո նրանց ստամները կմաշվեն, կկարճանան — հարցըց ոգնականս։

— Կրծողների կտրիչները մեր ատամների նման չեն. նրանց կտրիչները, ճիշտ ե, ծայրից մաշվում են, կարճանում, բայց միևնույն ժամանակ շարունակ աճում են, այդ ատամները չեն թափվում, աճում են, մաշվում են ծայրից, ելի աճում և միշտ ել համարյա առաջվա յերկարությունն ունեն։

Փորձեցինք ատամների ամրությունը. նույնիսկ կարծը պատրան ունեցող սերմերը չելին դիմանում նրա ուժին։

Ճագարամուկը նապաստակի յեր նման, իսկ ընդհանուր տեսքով հիշեցնում եր ավստրալիական կենդուրուին. յետեւի վոտքերը շատ և շատ յերկար ենին, համարյա չորս հինգ անգամ (Ել ավելի) մեծ առջևի վոտքերից։ Ճագարամկան սիրտն ուժգին բարախում եր. չեր կարող հաշտվել անսպասելի գերության հետ։ Փորձում եր ազատվել մեր ձեռքից, դիմեց իր ատամների ոգնությանը, բայց նրա ճիղերն իզուր անցան։

Վորոշեցինք բերել տուն և ընտելացնել նրան:

Ուղեկիցներս շատ ելին ուրախացել: Դեռ տուն չհասած՝ սկսեցինք ուսումնասիրել ճագարամկան հատկանիշները: Բոլորիս ուշադրությունը գրավեցին նրա մեծ և վառվուն աչքերը:

— Ճագարամկան աչքերը շատ նման են գիշերային գիշատիչ թոշունի աչքերին—նկատեց մեկը:

— Այո,—ասացի—ճիշտ դիտողություն ե, իզուր չեն նրա աչքերը խոշոր, փայլուն և դուրս ընկած: Ճագարամուկը սովորաբար վորսի լե դուրս գալիս կամ գիշերները կամ ել յերեկոյան դեմ: Յերեկները, մանավանդ տոթ յեղանակներին, նա իր խոնավ անկողնից դուրս չի գա, իհարկի յեթե մեզ նմանները չվոնդելին նրան բնից: Յերբ արել մայր ե մտնում, զով-հովը գետնի վրա տարածվում, ճագարամուկը թողնում ե իր բունը և վորսի դիմում. նա իր խոշոր աչքերով լավ ե տեսնում շըջապատը, լավ զգում թշնամուն և գտնում սնունդը:

• Յես, նրա ականջներից մեղմ քաշելով՝ ասացի:

— Ճագարամուկը լավ լսողություն ունի, այդ յերեվում ե նրա յերկար ականջներից: Քթածակերն ել լայն են, բեխերը յերկար, ուրեմն հոտառությունն ել վատ չե:

Մեզ զարմացրեց նրա յերկար՝ ծալը փնջավոր պոչը, մանավանդ յետեի յերկար վոտքերը: Յերկար պոչը ղեկի տեղ ե ծառայում, վոստոսաելիս՝ յերբեմն պոչի շնորհիվ նա կարողանում ե արագությամբ շեղվել աջ կամ ձախ: Յերբեմն ել, ինչպես հետո տեսանք մեր տանը, նա հենվում եր պոչին, յերբ բարձրանում եր յետեի վոտքերի վրա:

Առջեկի վոտքերը շատ փոքր են, և դրանք մեծ ոգնություն չեն անում նրան, իսկ թոփչքի ժամանակ խաչաձև ծալվում են կրծքին: Սակայն հանգիստ շարժվելու ժամանակ նա պահպում է չորս վոտքերի վրա:

Բերինք տուն։ Պատուհանի վրա հատուկ տեղ պատրաստեցինք։ Արևածաղկի սերմեր թափեցինք նրա առաջ։ Ճագարամուկն առանց բաշվելու առջնի վոտքերով վերցնում եր սերմերը, տանում բերան, կտրիչներով մաքրում եր կճեպները և ապա ուտում սերմերը։ Նրա ուտելու ձեզ մեծ զվաճություն պատճառեց մեզ։ Առջեկի վոտքերը գործ եր ածում ձեռքերի տեղ։

Հանկարծ ճագարամուկը վեր ցատկեց և փոքրիկ կատվի պես կամացուկ ճշաց։ Փոքրիկ բնասեր վարդգեսն եր պատճառը։ Նա գաղտագողի ճղմել եր նրա պոչը։

— Ուզում ելի իմանալ, թե ինչպիսի ձայն ե հանում — արդարացավ նա։

Յերբ ուշադրություն չելինք դարձնում ճագարամկան վրա և հեռվից դիտում ելինք նրան, նա ավելի ազատ եր պահում իրեն, ավելի աշխուժանում եր։ Գեղեցիկ, շարժուն գլուխն այս ու այն կողմը տանելով, յերկար բեխերը շարժելով, վառվուն աչքերով ամեն բան լավ դիտելով՝ կարծես ուզում եր հասկանալ, թե վորտեղ և ում ձեռքն ե ընկել։ Մեկեն ի մեկ շարժվում եր չորս վոտքի վրա, դանդաղ ու ծանր եր այդ բայլվածքը։ Վոստոստալիս պահվում եր յետեկի վոտքերի վրա։

Ճագարամուկն առաջին որերը մեղանից դժգոհ եր, չեր ցանկանում մեզ հետ հաշտվել։ Հաճախ, հենց վոր մոտենում ելինք, կծկվում եր պատուհանի անկյունում և այնտեղից նայում մեզ վախեցած։ Յերբ փորձում ելի շոյել նրան, նույնիսկ սպառնում եր ցուց տալ իր սուր կտրիչների ուժը։ Բայց շատ շուտով այնքան ընտելացավ, վոր արդեն ձեռքիցս եր սնունդը վերցնում։ Սկզբում կերակրում ելինք արևածաղկի սերմերով («սեմիչկա»), հետո տալիս ելինք բույսի թարմ արմատներ, կոճղեղներ, մի շատներ։

Իսկ իր բնական միջավայրում նա չեր հրաժարվում նաև փոքրիկ թոշնիկներից, սիրում եր նրանց ձվաները:

Յերբ ճագարամուկը մեզ հետ բոլորովին բարեկամացավ, ցած դրինք նրան հատակի վրա, նա իրեն ավելի ազատ զգալով՝ սկսեց ուրախ-ուրախ ցատկուել սենյակի մեջ անկյունից դեպի մյուսը: Սենյակում յեղած կարասիները մի քիչ խանգարում եյին նրա ազատ շարժումներին: Վորոշեցինք նրան դուրս բերել մոտակա դաշտը: Իհարկե ազատ բաց չթողինք: Ինչքան ել վոր ընտելացած լիներ, այնուամենայնիվ բոլորովին ազատ թողնել, յերկյուղալի յեր: Բավական եր դուրս գար լայնատարած դաշտը և նա անպայման կմոռանար իր նոր բարեկամներին: Նրա պոչից յերկար թել կապեցինք: Դուրս յեկանք դաշտը. հաղիվ բաց թողինք ճագարամկան և նա սրբնթաց նետվեց դեպի առաջ, թելը ձգվեց, կենդանին կապանքներից չկարողանալով ազատվել՝ փովեց գետնին: Վարդգեսն առաջ վազեց, վոր թելը չձգվի և չխանգարի ճագարամկան վազքը: Ճագարամուկն այնքան արագ եր վազում, վոր Վարդգեսը հաղիվ եր հասնում նրա յետելից: Կենդանին իրեն ազատ զգալով՝ վազում եր իր սովորական թոփչքներով: Վարդգեսը հոգնել եր. հանկարծ նա սայթաբեց, վայր ընկավ, թելը ձեռքից բաց թողեց: Ճագարամուկը կարծես զգաց իր փրկությունը, սկսեց ավելի արագ, ավելի մեծ թոփչքներով փախչել մեզանից: Բոլորս ել ընկանք նրա յետելից: Կենդանու վազքը վոլորապտույտ եր, զիգ-զագներով, մենք բավականաշափ հոգնեցինք նրան հետապնդելով: Վախենում ելինք հանկարծ չծլկվեր. Նրա գույնն այնքան նման եր հողի գույնի, վոր յեթե նա շատ հեռանար մեզնից, բոլորովին անտեսանելի կդառնար: Քիչ եր մնացել, վոր իր ցեղակիցներից մեկի բունը մտներ, բայց յես ժամանակին հասա, բռնեցի թելի ծայրից և ուժեղ յետ բաշեցի. հաղիվ եր նա մտել անցքը, վոր յես իսկույն դուրս բա-

շեցի։ Բարկացավ ճագարամուկը, այս ու այն կողմն ընկավ, ճգնում եր թելից աղատվել։ Յերբ ձեռքերս մոտեցրի, վոր բռնեմ, ճշաց և սպառնաց կտրիչներով։ Բռնեցի։
— Ինչու յեր նա զիգզազներով փախչում և այնքան յերկարացնում փախուստը հարցրեց Հայկը։

Իս փոխարեն պատասխանեց Վարդգեսը.

— Յես կարծում եմ, — ասաց նա. — վոր նա սովորել ե այդպես անել. հետապնդող թշնամին զիգզազների շնորհիվ շատ անգամ մոլորվում և հոգնում ե։ Գոնե յես բավական հոգնեցի նրա յետեից վազելով. այս կողմ ես ընկնում, այն կողմ ընկնում, վազում ես յետեից և ահա կարծում ես, թե հասար նրան, բայց ~~մ~~ւր, մեկ ել տեսար ճարպիկ վոստյունով թուավ դեպի աջ, հետո ձախ…… Յեթե թելը չիներ, հազիվ թե բռնեյինք նրան. թվում ե ինձ, վոր վազող ձին ել չեր կարող նրա յետեից հասնել։

— Մի քան ել չպիտի մոռանալ, — ավելացրի յես— փախուստի ժամանակ ճագարամուկը վորոնում ե հարսար բռն թշնամուց աղատվելու համար։ Այս ու այն կողմ ընկնելով՝ նա սիաժամանակ իր աչքերով փնտռում ե այն փրկարար խորշը, վոր վերջ պիտի տար թշնամու հետապնդմանը։

Անցավ չորս որ ել։ Ճագարամուկը հաշտվեց իր գերության հետ, դարձել եր բոլորովին ընտանի կենդանի. աղատ ցատկոտում եր սենյակից սենյակ, յերեմն ել չորս վոտքերի վրա յեր ման գալիս։ Զեր վախենում մեղնից, չեր խուսափում, կտրիչներով ել չեր սպառնում։ Յերբ ժամանակը գալիս եր, կերակրում ելինք, բայց ավելի հաճախ, սոված ժամանակ ինքն եր վերադառնում իր բռնը և անպակաս «սեմիչկան» կրծում։

Մայիս ամիսն եր. Առաջարկեցի մի քանի որ պահել նրան և ապա բաց թողնել. այդպես եր մեր սովորությու-

Նը կենդանուն կղիտելինք յերկար ժամանակ և յերբ նրա կրանքը լավ ուսումնասիրում ելինք, այլևս ավելորդ ելինք գտնում պահել նրան դերության մեջ, արձակում ելինք։

Յես ասացի.

— Գիտեք ի՞նչ կա, այլևս կարիք չկա ճագարամուկը մեզ մոտ պահելու. պետք արձակել, նա հունիսին պիտի ձագեր հանի։ Սովորական ճագարամկները հունիսին են ձագեր ունենում։ Զագերի համար նա պիտի բնի մեջ փափուկ տեղ պատրաստի։

— Քանի ձագ ե բերում նա,—հարցրեց Հայկը։

— Մինչև հինգ. ամբողջ ամառը ձագերը մնում են մոր հետ։ Աշնան մոտ՝ ոգոստոսին, սեպտեմբերին խորասուզվում են ձմեռալին քնի մեջ։ Զմեռը բնից այլևս դուրս չեն գալիս։ Նույնիսկ, ապահով լինելու համար, ճագարամուկը նախապես փակում ե իր բնի բոլոր մուտքերը։ Արջի նման նա անշարժանում ե բնի մեջ, խորը քնում. սնունդի կարիք ել չի զգում բնի ժամանակ, ահա թե ինչու նա չի հավաքում իր բնի մեջ ձմեռվա պաշար։

— Իսկ յէրբ ե զարթնում ձմեռալին բնից։

— Ապրիլ ամսին, մեզնում՝ այդ ամսի սկզբներին, իսկ հյուսիսալին կողմերում՝ վերջերքին՝ յերկրորդ կեսին։ Ճագարամկան ազատ թողնելու առաջարկս ընդունվեց։ Մինչև ազատման որն ոգնականներիս խնամատարությունը շարունակվում եր։ Վորոշեցինք նրան տանել նորից իր բունը։

Դժբախտաբար մեր բարի ցանկությունը չիրագործվեց։

Աղատության նախընթաց որը գնացել ելի գործով քաղաք։ Յերբ վերադարձա տուն, սովորականի նման հետաքրքրվեցի ճագարամկան վիճակով։ Մտա նրա սենյակը, — ճագարամուկը չկար... ոգնականներս ել չելին յերկը, թեև արդեն կերակրելու ժամն եր։

Անցա բակը և ի՞նչ տեսնեմ. մի կատու՝ վարդպեսի
և հայկի ձեռքերին մահամերձ, աղիողորմ ճիչեր եր ար-
ձակում։ Կատուն ճգնում եր ազատվել ոգնականներիս
ձեռքերից, բայց իզուր, նրան գղղղում եյին, բզկտում.
պոչը ճղմում, ականջներից բաշում, փայտովհարվածում...
խփում հա խփում... կատուն ինչպես յերեսում ե ծանր
հանցանք եր գործել։

Յես իսկույն հասկացա բանն ինչումն եր, բայց և
այնպես ոգնականներս խոսքերն իրար բերնից խլելով
շտապ շտապ պատմում եյին հանցանքը։

Ահա թե ինչպես պատահեց։

Ճագարամուկը, ոգնականներիս հսկողության տակ
ազատ զբոսնում են բակում և իր աշխուժ վոստումներով հա-
ճույք եր պատճառում բոլորին։ Փախչել անկարելի յեր,
վորովհետև բակը փոքր եր և փողոցի վրա ուներ բարձր պատ։

Չեյին նկատել, թե ինչպես խորամանկ ու ճարպիկ
կատուն թագստոցում կուչ յեկած հետեւում եր ճագարա-
մուկան։ Կատուն, վորպես մկների ցեղերի խիստ սիրահար,
հավանական ե, հասկացել եր, վոր ճագարամուկն ել նը-
րանց աղգականն ե, ապա ուրեմն և համեղ պատառնե-
րից մեկ։ Իհարկե, առանց յերկար մտածելու, հարմար
բոպե ընտրելով վրա յե համում և ճանկելով ճշացող ճա-
գարամուկան՝ փախչում, անցնում ե հարեան բակը։ Սառ-
նասրառեն լափելով անմեղ կենդանուն՝ կատուն կարծես
վոչինչ չեղած, նորից վերադառնում ե մեր բակը։ Ոգնա-
կաններս անմիջապես բռնել եյին նրան և իրենց վրեժն
ելին լուծում։

Կատուն ուժեղ հարվածներից շարունակ ծվծվում ու
աղիողորմ մլավում եր։

Բավական ե, — ասացի, — կատվին ծեծելով ճագա-
րամուկան չենք կենդանացնի։


Խեղճ ճագարամուկ։ Իչքան սիրում ելինք նրան ու

վորքան նա մտերմացել եր մեզ հետո Նրան հայրենիք վերադառնալ չվիճակվեց։ Ոգնականներս լուրջ տիսրեցին։

Մենք զրկվեցինք մեր կենդանանոցի ամենաաշխույժ, ամենաադուրեկան կենդանուց։ Ի՞նչ արած, պետք եր հաշտվել։

— Կատուն ձեռքիցս չեշտ չի պրծնի, — ասաց Վարդգեսը. — յես Նրան մի անգամ ել պիտի մի լավ դաս տամ։

— Վհշ — պատասխանեցի — ավելի լավ ե, սրանից հետո միշտ զգույշ լինել։



Բ ԶԵԶՆԵՐԻ ՅԵՏԵՎԻՑ

Բեղեզների կյանքը բավական հետաքրքրական է։ Շատ տեսակի բեղեզներ կան՝ մեծ, փոքր, տարբեր ձևերի և գույների, ցամաքի վրա, ջրերի մեջ, ցերեկվա, գիշերվա... շատ շատերի վրա մենք ամեննեին ուշադրություն չենք դարձնում։ Իսկ յերբ մանրամասն դիտում ենք այս կամ այն բեղեզի կյանքը, տեսնում ենք, վոր այդ փոքրիկ միջատներն ել արժանի յեն ուշադրության։ Նրանք ել կենդանի արարածներ են, թեև նրանց ամբողջ մարմինը ծածկված է կարծր լեղջուրային պատյանով, բայց մարմնի ներսը նույն կյանքն է յեռում։ Ամեն մի բղեզ ունի իր հետաքրքրական գծերը, սովորությունները։ Իսկի տեղ կա, ուր բղեզ չլինի. ամայի դաշտում, կամ կանաչ դաշտում, լեռների ստորոտներում կամ ծովափին, հողի տակ, քարայրներում, ծառերի կեղևների տակ, նույնիսկ տանը՝ բակում, մառաններում։ Յեթե լավ վորոնես, ամեն տեղ ել կը գտնես։

Պատմես յերկուսի մասին. մեկը հաճախ է պատահում մարդկանց բնակավայրերում, իսկ մյուսը հազվագյուտ է, բայց հետաքրքրական է իր կյանքով և անցյալով։

Դիտողություններս մենակ չեմի անում։ Միշտ ել ինձ ուղեկցում ելին փոքրիկ բնասեր ընկերներս և այդ բնասերներն իսկապես անվախ և ոգտակար ընկերներ ելին։ Յերկյուղ ասած բանը նրանք չգիտելին, վոչ ել զզվում ելին «զզվելի» կենդանիներից, ինչպիսիներից ելին շատերի կաքծիքով՝ ոձր, գորտը։ Նրանք հսկա Գուլիվերի


քայլերով չեյին փախչում և անծանոթ կենդանուց. ընդհապառակը, յերբ կենդանի եյին տեսնում՝ բղեղ, մողես, գորտ, իսկույն իրար հետ մրցելով վազում եցին բռնելու։ Յեզ պիտի տեսնելիք, վորքան ուրախանում եցին, յերբ հաջողվում եր կենդանու վոտքից կամ պոչից բռնել։

— Բռնեցի, բռնեցի... մայիսյան բղեղ, մայիսյան բղեղ... հաճախ եցին լսվում այս բացագանչությունները։

Պիտի ասել, ոգնականներս, յերբ դեռ այնքան ել փորձված չեյին, պատահած բղեղին «Մայիսյան բղեղ» եյին անվանում. հետո շատե՛ցի նման այդ անունը տալիս եյին «վոսկերգեղին»։ Բայց մի քանի եքսկուրսիաներից հետո բավականաչափ սովորեցին և հեշտությամբ ճանաչում եյին հաճախ հանդիպող բղեղներին։

ԲԼԱՊՍ

Առավոտ եր. արևի ճառագայթներն այնքան չեցին այրում. նույնիսկ փշում եր թեթև զով քամի։ Սենյակումս նստած պարապում եյի. հարեան սենյակում հանկարծ լսվեց տղաների աղաղակ, սենյակիս գուռն ուժգին բացվեց և յերեխաների մի մեծ քանակ ներս խուժեց սենյակս։ Բանակի գլուխն եյին անցած ոգնականներս։ Սրանք աղաղակում եյին, մյուսներն ել յետ չեյին մնում։



Նկար № 2.

— «Զերնոկրիլ»... սևաթեփիկ... սևաթեփիկ....

Սկսեցին իրար հետ վիճել՝ «առաջ յես տեսա», «չե յես տեսաւ», կանչում երին նրանք: Բզեզը Վարդգեսի ձեռքին եր (տես նկ. 2): Իսկապես բզեզը «սևաթեփիկների» տեսակներից եր: Հազիվ բզեզը մոտեցրեց ինձ, վոր լավ ցույց տա, ինչպես գարշանքով դեմքը ծամածոեց, բզեզին ցած նետեց «թյու, թյու», անելով: Տղաներն ել վախեցած յետ քաշվեցին: Ի՞նչ եր պատահել, սկզբում լավ չհասկացան: Վարդգեսի մատներին ինչ վոր շագանակագույն հեղուկ եր մնացել: Յես գիտեյի բանն ինչումն եր:

— Ապա հոտ առ—ասացի:

Վարդգեսը մատը տարավ քթին «Յախք»—գոշեց նա՝ դեմքը ծամածոելով:—Ես ինչ անդուրեկան հոտ եմ: Տղաներն ել միմյանց յետելից սկսեցին հոտ առնել. յուրաքանչյուրն ել «թյու» անելով իսկույն յետ եր քաշվում: Վարդգեսը մի քիչ վախեցել եր: Առաջին անգամ միշտ այդպես ել լինում:

Հո թունավոր չե—հարցրեց նա:

— Բան չկա, հանգստացիր—ասացի—գնա մատներդ լվա ու շուտ արի այստեղ: Յերբ նա մատները լվաց ու յեկավ, բոլորս արջապատեցինք բզեզին. սովորաբար իմ պարտականությունս եր «լեկցիա» կարդալ, այսինքն պատմել բզեզի մասին: Առաջին անգամն երին հանդիպում նրան: Բզեզը մեծ եր, բոլորովին սև, փորը յետելում սրածայր, այնպես վոր կարծր յեղջյուրալին վերնաթերն ել սրածայր ելին: Բզեզների մի ամբողջ ընտանիք, «սևաթեփիկներ» են կոչվում. այս բզեզն ալդ ընտանիքի խոշոր տեսակներից եր: Գիտնականները սրան Բլազս են ասում: Պատահում ե սովորաբար մութ տեղերում, մառաններում, ներքնահարկերում: Մութ միջավայրում սև դույն ունենալը նրա համար ձեռնտու յե, թշնամիները չեն նկատի:

— Իսկ ինչու յե նա անդուրեկան հեղուկ արտա-
դրում — հարցրեց մեկը:

Բացատրեցի.

— Բլապսը յերբեմն լույս տեղ ե գուրս գալիս, արդ
միջոցին ոև բզեզին թշնամիներն անմիջապես նկատում են
և իհարկե կը լափեն. բայց...

— ... Հազիվ թշնամին մոտեցավ նրան անուշ անե-
լու — շարունակեց միտքս Վարդգեսը — այդ ըոպեյին Բլապ-
սը գուրս ե թափում իր անդուրեկան հեղուկը, թշնամին
թողնում, փախչում ե, գուցե և աչքերը հեղուկով շա-
ղախված:

— Այդպես ե — ասացի — թշնամիներն այդ «հոտած»
բզեզին ձեռք չեն տալիս, գերադասում են հեռու մնալ
հեղուկից, Յեվ Բլապսը ազատվում ե: Մարդկանց համար
թեև հոտն անտանելի յե, բայց բոլորովին անվնաս: Մենք,
իհարկե հասկանում ենք, վոր նրա հեղուկից չենք մեռնի,
չենք մնասվի, արդ պատճառով ել առանց վախենալու
բռնում ենք: Բայց շատերն այդ չգիտեն, ահա ինչպես
դուք բոլորդ չգիտեյիք մինչև այժմ: Յեթե յես չլինելի,
բզեզը կազատվեր, դուք նրան ել ձեռք չելիք տա՝ վա-
խենալով հեղուկից:

Ուրեմն բզեզի համար այդ հեղուկը փրկարար մի-
ջոց ե:

— Այժմ ձեզանից ամենաքաջը թող նորից բռնի բզե-
զին, բռնեք կողքերից:

— Այ գիդի հայ — բացագանչեցին մի քանիսը, իրար
նայեցին, բայց բացի Վարդգեսից վոչ վոք չցանկացավ
«հոտած» բզեզին բռնել: Յերբ Վարդգեսը բռնեց նրան,
բոլորն ել սիրտ առան: Ճատներով փորձում ելին մարմնի
կարծրությունը, թաթիկներից քաշում: Բզեզը յերկրորդ
անգամ հեղուկ չարտադրեց: Բաց թողինք բզեզին սեղա-
նի վրա, Աղատություն զգալով վազեց առաջ. քիչ մնաց

վայր ընկնի սեղանից։ Առեն անգամ յերբ փորձում ելին բռնելու, նա վոտքերի ուժեղ շարժումներով պաշտպանվում եր և ազատվում բռնող մատներից։

Հանկարծ մի բան մեզ շատ զարմացըց։ Այն ե, ուզում ելի վերջնականապես նրան բռնել, մեկ ել տեսանք՝ բզեզը «կանգնեց» գլխի վրա, ճիշտ այնպես, ինչպես մենք ելինք անում սովորաբար մանկության որերին, յերբ ուզում ելինք «Ճիրկի Կլոունի» (Կրկեսի խեղկատակի) պես գլխի վրա կանգնել, հենվելով ձեռքերի վրա, վոտքերը բարձրացնելով։



Նկար № 3.

Իսկապես զվարճալի պատկեր եր։ Մենք այլիս բզեզին չհետապնդեցինք. մարմինն ուղղահայց պահած, փորը վերև ուղղած, հենված յերեք զույգ թաթիկների վրա, մնացել եր անշարժ։

Այդ ինչ «Փոկուս» ե—ասաց զարմացած Վարդգեսը ձեռքերը վախից լեռ բաշելով։

— «Փոկուս» շի—ասացի—այլ պաշտպանության մի ուրիշ ձև։ Յերբեմն, վախեցած կենդանիները, յերբ հանկարծակի յեն գալիս՝ այդ դեպքում կամ արտասովոր շարժումներ են անում, կամ ել ահարեկող դրություն ընդունում, այ որինակ, տեսած կլինեք վախեցած կատվին շան առաջ։ Կատուն հանկարծ փրփում ե, մեջքը վեր բարձրացնում, մազերը ցից պահում, մի խոսքով ահարեկիչ դիրք ստանում... շան վրա դա ազդում ե և շունը դրանից վախենում ե...։ Մեր բզեզի «գլխի վրա կանգնելը» հենց այդ նշանակությունն ունի։ Նա իհարկե անգիտակցաբար ե այդ անում, յերկյուղից հանկարծ ալդպիսի դիրք ընդունելով՝ ազդում ե հետապնդող թշնամու վրա... և ազատվում... բայց մենք, հասկացանք այդ «Փոկուսը», մեզ վրա չազդեց, թեև փոքրիկ ընկերներս կարծես մի քիչ վախեցան։

Բլապսին բանտարկեցինք կարտոնի արկղի մեջ։ Խուփը ծածկեցինք—շնչելու ող եր հարկավոր բզեզին։ Բզեզի բանտարկությունը տեսց յերկու ամիս և մենք նրան ամենեին չերինք կերակրում։ Կարտոնը կրծած եր ներսից, մի գուցե թղթով եր սնվում, բայց դա ինչ կերակուր ե։ Սկսվեց յերըորդ ամիսը. բզեզը դեռ ապրում եր. մեկ որ եւ, յերբ արկղը բացի—բզեզը չկար, անհետացել եր. ուլրի փախավ և ինչպես—չիմացանք։ Վորոնեցինք սենյակում, նրա բոլոր անկյունները—բզեզը չկար։ Ալդպես ել չիմացանք ով եր ազատել կալանավորին։ Գուցե ելի յերկար ապրեր առանց սնունդի, յեթե չը փախչեր։ Համարյայերկու ու կես ամիս սոված ապրում եր։ Բայց այդ այնքան ել զարմանալի չե։ Կենդանիների աշխարհում սովորական ե առանց սնունդի յերկար ապրելը, որինակ գործը, կրիան, ոճը մի քանի ամիս անսնունդ մնում են,

ՄՐԲԱՋԱՆ ԿՈՊՐԸ

— Կարելի՞ է ներս մտնել—լսվեց սենյակիս դռան
յետևից:

— Մտեք—ասացի:

Սենյակս մտան իմ մշտական փոքրիկ ուղեկիցները:
Զինված ելին խոկական բնագետի նման. վերցրել ելին
ցանցեր, արկղներ և ճամբորդական տոպլրակներ:

— Հը, ի՞նչ կա—հարցրի, այդ ուր եք պատրաստվել:

— Գնանք, լավ յեղանակ ե:

Թեև տրամադրություն չունելի այդ որը դուրս գա-
լու, շտապ գործ ունելի, բայց տեսնելով փոքրիկ բնա-
սերների պատրաստությունները, չկարողացա մերժել:

— Գնանք—համաձայնվեցի:

Ուղեկիցներս առանց յերկար խոսելու, խոկույն վազե-
ցին փողոց, վախենում ելին,—հանկարծ միտքս չփոխեմ:
Վերցրի անհրաժեշտ իրերն ու հետևեցի նրանց:

Հեռացանք քաղաքից: Ել տափակ քարեր չմնացին,
վոր չբարձրացնելինք: Փայտե փոքրիկ թիակներով, փոքր
ինչ չորացած անասունների աղբն ելինք տրորում և սրա
մեջ միշտ ել գտնում ելինք բազմաթիվ աղբաբեզներ.
մեր ուշադրությունը կրավեց մի լայն փոս. այս ու այն
կողմ ընկած ելին կուտ-կույտ բազմաթիվ քարեր: Խու-
զարկու աչքերով վորս ելինք վորոնում: Մի չորացած աղ-
բի միջից դուրս հանեցինք մի քանի խոշոր աղբաբեզ-
ներ: Նրանք այնքան մաքուր ելին, վոր կարելի չեր և
մատներով բռնել, փայտիկներով մաքրեցինք նրանց վրայի
չորացած աղբը: Հազիվ փորձեցի մատներովս բռնել նրան-
ցից մեկին, բզեզը՝ թաթիկները հավաքելով՝ այնպես կուչ
յեկավ ու անշարժացավ. վոր բոլորս ել զարմացանք. կար-
ծեցինք, թե բզեզը սատկեց: Յերբ մյուս բզեզներին
ել սկսեցինք շփել, նրանք ել կուշ յեկան, թաթիկները
ծալեցին, Սպասում ելինք. մի քիչ անց, մեկը մյուսի յե-

տեից թաթիկները դուրս ձգեցին ու փորձում ելին վոտքի կանգնել։ Այդ բանը մեզ շատ հետաքրքրեց։ Բղեգներին զցեցինք արկղի մեջ, բացի մեկից, վորի վրա կըկնեցինք նույն փորձը։ Յերբ ամեն անգամ նրա մարմնին դիպչում ելի, նա կուչ եր գալիս և անշարժանում։ Կուչ յեկած բղեղը մեռածի յեր նման։ այդ սովորությունը լավ միջոց եր թշնամիներից փրկվելու համար։ շատերը մեռած սընունդ չեն սիրում։

Այդ նույն բղեղի վրա մի ուրիշ ավելի զվարճալի յերկութել նկատեցինք, պաշտպանության մի ուրիշ ձև։ Մեկ ել տեսար հանկարծ բոլոր թաթիկներն ել դուրս ցցեց, բաց արեց (փորձի ժամանակ մեջքի վրա յեր պառկած)։ Վորքան փորձեցի թաթիկները ծալել, չկարողացա, այսինքն՝ ծալել կարելի յեր, բայց զոռով չարեցի, վորով հետև թաթիկները կկոտրվելին։

Այս տարօրինակ «ֆոկուսը» (այդպես անվանեց փոքրիկ բնասերներից մեկը) նույնպես կենսական նշանակություն ուներ։ Յենթադրենք մի ըոպե, վոր բղեղին չոգնեց կուչ գալը, կամ ժամանակին չկարողացավ կուչ գալ և մողեսը նրան բերանն առավ. ահա հենց այդ միջոցին նախկույյն դուրս ե ցցում իր փշավոր, կարծր թաթիկները. այժմ յերևակայում եք, ի՞նչ պիտի զգար մողեսը. նա բղեղին այլևս լավել անկարող եր, ըսդհակառակը՝ բերանում ցավ զգալով, կաշխատի ամեն կերպ դուրս նետել աղբարեղին....

—Տեսնում եք —վերջացրի բացատրությունս — բնության մեջ ամեն ոի կենդանի արարած պաշտպանության հատուկ միջոց ունի, ամենքն ել իրենց կյանքը փրկելու մասին են մտածում։

Գնացինք առաջ։ Հեռվից ավազի մեջ մի սև դունդ նկատեցի, Շտապեցինք այն կողմ իսկույն հասկացա, վոր բղեղ եր և այն ել շատ խոշոր բղեղ։ Դեմքիս ժպիտը նը-

կատելով՝ ուղեկիցներս հասկացան, վոր հազվագյուտ վորս
եր մեր առաջ։ Բոնեցի. անչափ մեծ եր մեր ուրա-
խությունը։ Մի շատ հազվագյուտ աղբարզեղ ելինք բոնել։
Աև գույն ուներ նա, քիչ տափակ և քիչ ձվածե, վորը
ինչ քառակուսի։ Մեծ դուխը վերևից պաշտպանված եր
կիսալուսնածե, ատամնավոր վահանիկով։ Թաթերը խոշոր
ելին և ուժեղ, և նրա առաջի դույզ թաթիկները՝ դրսից
ատամնավոր։



— Սա յել աղբարզեղ պիտի լի-
նի—ասաց Հայկը։

— Ինչից իմացար—հարցը։
— Մեր տեսած և բոնած աղբա-
րզեղների առջեկի վոտքերն ել ա-
տամնավոր են. այդ բզեզներն առ-
ջեկի վոտքերով փորում, տրորում են
աղբը, գնդեր շինում, ծեփում, ա-
տամներով քերթում, հարթում։

ԿՈԴՐ.

Շատ իրավացի յեր նաւ Փորող
միջատների, մասնավորապես աղ-

նկ. № 4.

բարզեզների հատկանիշներից մեկն եր այդ։
Գտած բզեզի թե թաթիկները, թե մարմինը ներքեցից
ծածկված ելին սև կարմրավուն սազնկներով։

— Փոքրիկ բնասերներ—ասացի—այս բզեզի հետ լավ
ծանոթանանք. սա աղբարզեզների ամենամեծ տեսակն ե,
զիտնականները նրան ասում են Սրբազան կոպը։ Շատ
հազվագյուտ բզեզ ե նա և հետաքրքրական անցյալ ունի.
շատ վաղ ժամանակներից ճանաչված ե նա և նույնիսկ
հարզված։ Կովկասը կարող ե հպարտանալ, վոր հյուրըն-
կալել ե այդպիսի հազվագյուտ բզեզի։ Հին Յեզիպտոսում,
ինչպես գիտեք, մարդիկ կռապաշտ ելին, պաշտում ելին
և մի քանի կենդանիների, վորոնց սրբազան ելին անվա-
նում։ Սրբազան կենդանիներից մեկն եր և այս բզեզը, ի-

հարկե խոսքը վերաբերում ե սրա նախնիքներին. շատ ելին սիրում կոպրին, յերկրապագում նրան, մի խոսքով այս բղեղը նրանց աստվածներից մեկն եր, Բարերի վրա քանդակում ելին կոպրին և իրեց կուապաշտական տաճարներում պահում։ Այդպիսի քարեր մեր որերի գիտնականները գրտել են Յեզիրապտոսում արած պեղումների ժամանակ (Նկ. 5)։



Նկար № 5.

Յե այդ սրբազան կոպրն այժմ ել ապրում ե. ապրում ե ահա հենց Բագու քաղաքի ամայի դաշտերում. նա չի յել մտածում, թե կար մի յերջանիկ ժամանակ, յերբ նրանախնիքները Յեզիրապտոսում մեծ հարգանք ելին վայելում, նըրանց անհանգիստ չելին անում և մեզ պես բնասերներ նրանց չելին բռնում ու արկղներում բանտարկում։ Իսկ այժմ....

Եռվկասլան աղբակույտերի մեջ քարշ ե տալիս իր մենափոր, անհրապուլը կրանքը, բոլորից մոռացված. իսկ կը գտնվի՝ այժմ մեկը, վոր քարի վրա քանդակի նրան, Միայն բնագետներն են, վոր չեն մոռանում. բռնելով նրան թեև սպանում, ասեղում են, բայց գոնե դնում են ապակե խուփ ունեցող կոլլեկցիայի արկղում և ամեն անգամ բոլորին ցույց տալով՝ հիշեցնում են նրա յերջանիկ ու պատվավոր անցյալը։

— Իսկ ինչու ելին կոպրին յերկրապագում, ի՞նչ ոգուտ եր նա տալիս—հարցը եց Վարդղեսը։

— Սա աղբաբղեղ ե, ուրեմն գործ ունի աղբի հետ. առհասարակ աղբաբղեցները աղբի մեծ կարիք ունեն. նրանք աղբով թե կըրակը վում են, թե իրենց սերնդի համար աղբից գնդակաձև բնակարաններ շինում։ Յեզիրապտա-

ցիները տեսնում ելին այդ. իհարկե այդ բզեզների շնորհիվ աղբը պակասում է, ուրեմն մարդկանց համար ավելի լավ, նրանց բնակավայրերը կմաքրվեն աղբից....: Յեթե բզեզն աղբը տանում է իր կարիքների համար, այդ մարդու համար ձեռնտու լի. և ինչպես չհարգել այդպիսի բզեզների....

Մենք Կոպրին իսկույն չտեղափոխեցինք արկղի մեջ: Նա գործի վրա յեր: Տեսավ մեզ, զգաց մեր ներկայությունը—հատնի չե, բայց Կոպրը հանգիստ շարունակում եր գործը: Ուրիշ տղբարզեզների նման, Կոպրն ել կովի աղբից գունդ եր պատրաստում. և ինչքան կանոնավոր եր և բզեզից ել մեծ: Նստած դնդի վրա թաթիկներով շարժում եր գունդը և միաժամանակ հղկում, հարթում նրա մակերևույթը: Պատկերն այնքան հետաքրքրական եր, վոր զմայլված դիտում ելինք: Մի անգամ բզեզը ցած իջավ, զնաց մի կողմ, բայց շուտով վերադարձավ և ելի շարունակեց աշխատանքը:


— Յեկեք այստեղ, յեկեք—հանկարծ կանչեց Հայկը, վոր աննկատելի հեռացել եր մեղանից—ելի որբագան Կոպր....:




Կոպրեն աշբագունդ
Են պատրաստում.

Առաջին կոպրից հեռու չեր նրա տեղը։ Այս անգամ յերկու կոպր տեսանք։ յերկուսն ել նստած ելին մեծ աղբագնդի վրա։ մենակ, ինչպես յերեսում ե, դժվար եր աշխատանքն ավարտել։ Յերկուսով գործն ավելի արագ ելին առաջ տանում (տես նկ. 6)։

Գունդը համարյա պատրաստ եր, աշխատում ելին նրան հարմար տեղ տանել։ Հավանական ե դեպի բունն ելին տանում և ուտելու պաշար ելին հավաքում։ Աշնան սկըզբներին նրանք այնքան իրենց ստամփսի մասին չեցին մտածում, վորքան ապագա սերնդի մասին։ Գետնի տակ կոպրը բուն ե փորում, հավաքած աղբից գունդ ե ծեփում, մեծ և տան ձտձեղնդիներսում տեղափորում ե ձվաները, ապա ծածկում ե գունդը։ Յեթե ձվաներից զարգանում են թրթուռներ, նրանք սնունդի մասին մտածելու հոգսեր չունեն։ կարիք չկա սնունդ վորոնելու, քանի վոր հենց իրենց բունը սննդարար աղբն ե. կեր վորքան կուզես։ Աղբն ուտում են ու ղարզանում։



FL0002279



Ա
2443

084.

«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻՑ» ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

| | | | | | |
|-----|----------------------|-----------------------------|---|----|----|
| 1. | Գաբրիելյան Թ. | — Միջատակեր բույսեր | . | 15 | կ. |
| 2. | Լեքեղեկ Ի. Կ. | — Ինչպես և առաջացել լեռկիրը | . | 30 | » |
| 3. | Գաբրիելյան Թ. | — Ովկիանի թագավորը | . | 20 | » |
| 7. | » | — Ճաղարամուկը, | . | . | . |
| | | բղեղների յիշելից | . | 25 | » |
| 10. | » | — Մողեսների աշխարհում | . | 25 | » |

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ ՆՈՒՅՆ ՍԵՐԻԱՅԻ

| | | |
|----|--------------------|----------------------------------|
| 4. | Սարգսյան Կ. | — Կենդանի ձրագներ |
| 6. | » | — Զարմանալի զենքեր |
| 8. | Կարենցեկ | — Ելեքտրիֆիկացիայի պիոներ Եղիսոն |
| 9. | Պիմենովա | — Ողակարիկով դեպի բեկո |

Դիմել Պետհրատի բոլոր գրախանութերին
յեվ բաժանմունքներին

